



## COVID-19-ի թեստերի տեսակները



- Վիրուսային թեստը կարող է ցույց տալ՝ արդյոք անձը **տվյալ պահին ունի COVID-19 վարակ**: Գոյություն ունեն երկու տեսակի վիրուսային թեստեր, որոնք օգտագործվում են COVID-19-ի ախտորոշման համար՝ նուկլեինաթթվի ուժեղացման թեստեր (ՆԱԹ/ՊՇՌ) և հակազենի թեստեր: Այդ թեստերը ստուգում են՝ արդյոք ախտանիշներ ունեցող անձը վարակված է COVID-19 վիրուսով: Դրանք օգտագործվում են նաև ախտանիշներ չունեցող մարդկանց ստուգման համար: Այդ թեստերը հանդիսանում են քթից կամ թքից վերցված նմուշի թեստեր:
- Հակամարմինների թեստը (հայտնի է նաև որպես սերոլոգիական (շնաբանական) թեստ) կարող է ցույց տալ՝ արդյոք անձը **նախկինում** եղել է վարակված: Դա արյան հետազոտության թեստ է: Հակամարմինների թեստը չի կարող հայտնել՝ արդյոք անձը տվյալ պահին վարակված է COVID-19-ով:

Իմացեք, թե որ տեսակի թեստն եք հանձնում: Եթե դուք թեստ եք հանձնում դպրոցների, միջոցառման վայրերի կամ սպորտային մրցաշարերի պահանջները բավարարելու համար, հավաստիացեք, որ հանձնում եք վիրուսային թեստ:

## Որտեղ թեստ հանձնել

**Եթե ձեր երեխան ունի աշխտանիշներ, դուք պետք է կապ հաստատեք ձեր երեխայի բժշկի կամ տեղական բժշկական կենտրոնի հետ:**

Չանգահարեք 2-1-1 կամ այցելեք [211LA](https://www.211.org), եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն բժիշկ գտնելու համար: Դուք կարող եք գտնել ձեզ մոտիկ բժշկական կենտրոն՝ [HRSA.gov](https://www.hrsa.gov) կայքէջում՝ մուտքագրելով ձեր փոստային ինդեքսի համարը (zip code):

**Եթե ձեր երեխան առողջ է, սակայն պետք է թեստ հանձնի,** ձեր երեխայի բժշկին կամ տեղական բժշկական կենտրոն այցելելուց բացի, կարող եք այցելել ստորև թվարկված վայրերից մեկը.



- **Լոս Անջելես Քաղաքի կամ Լոս Անջելեսի Շրջանի թեստավորման կենտրոններ:** Այդ կենտրոններն առաջարկում են COVID-19-ի անվճար թեստավորում Լոս Անջելեսի Շրջանում բնակվող բոլոր անձանց՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Չկան տարիքային սահմանափակումներ, թե ով կարող է թեստավորվել Լոս Անջելես Քաղաքի և Շրջանի թեստավորման կենտրոններում: Մինչև 16 տարեկան երեխաներին պետք է ուղեկցեն մեծահասակները: Ուղեկցող մեծահասակից կարող է պահանջվել վերցնել նմուշ երեխայից: Չի պահանջվում մշտապես ժամադրվել, սակայն այն խրախուսվում է՝ սպասելու ժամանակը կրճատել համար: Այցելեք

[covid.19.lacounty.gov/testing](https://covid.19.lacounty.gov/testing) կայքէջ կամ զանգահարեք 2-1-1 համարով՝ թեստավորում կազմակերպելու համար:



- **Ղեղատուն:** Շատ դեղատներ առաջարկում են COVID-19-ի անվճար վիրուսային թեստեր: Մանրամասների և համոզվելու համար, որ տարիքային սահմանափակումները չեն փոխվել, զանգահարեք ձեր տեղական դեղատուն կամ այցելեք նրանց կայք:
  - **Walmart` Quest Diagnostics-ի հետ համագործակցությամբ`** 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաների համար
  - **CVS Health`** 3 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաների համար
  - **Walgreens`** 3 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաների համար
  - **Rite Aid`** 4 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաների համար
  - **Անկախ դեղատներ`** [doineedacovid19test.com](https://doineedacovid19test.com)



- **Ձեր երեխայի դպրոցական կամ երիտասարդական մարզական միություն:** Շատ դպրոցներ և դպրոցական շրջաններ տրամադրում են COVID-19-ի անվճար թեստավորում աշակերտներին, աշխատակիցներին և կամավորներին: Կապ հաստատեք ձեր դպրոցի կամ մարզական միության կազմակերպիչների հետ՝ իմանալու՝ արդյոք թեստավորումը հասանելի է, և ինչպես թեստավորվել:

### Թեստավորում տանը



- Տնային թեստերը հասանելի են դեղատոմսով կամ առանց դեղատոմսի շատ դեղատներում, սուպերմարկետներում և մանրածախ առևտրի հանրախանութներում (big box stores):
- Եթե դուք դիտարկում եք տնային թեստավորման պարագաներ օգտագործելը պահանջվող թեստավորման համար, հավաստիացեք, որ դրանք ընդունվում են դպրոցի կամ միջոցառման անցկացման վայրի կողմից: Տնային թեստավորման արդյունքները չեն կարող օգտագործվել կարանտինը վաղաժամ ավարտելու համար կամ ապացուցելու համար, որ ձեր երեխան վարակված չէ COVID-19-ով:
- Նկատի ունեցեք, որ տնային թեստերի համար սովորաբար ապահովագրական ընկերությունները չեն վճարում, եթե դրանք նշանակված չեն բժշկի կողմից:

Ձգուշացեք COVID-19-ի թեստավորման հետ կապված խարդախություններից. այցելեք [Հանրային Առողջության Վարչության COVID-19-ի հետ կապված կեղծիքների և խարդախությունների կայքէջը](#)՝ COVID-19-ի շուրջ տարածված կեղծիքների և խարդախությունների մասին տեղեկանալու համար:

Տնային թեստավորման հավաքածուների մասին տեղեկությունների համար այցելեք [CDC-ի ինքնուրույն թեստավորման կայքէջ](#):



COVID-19-ի թեստերի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների և ձեր թեստերի արդյունքների նշանակության մասին իմանալու համար այցելեք՝  
[ph.lacounty.gov/covidtests](https://ph.lacounty.gov/covidtests).